## Մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

**Ֆիզկուլտուրա(11 դասաժամ), հայոց պատմություն(8 դասաժամ),**

**մաթեմատիկա (12 դասաժամ), դասվար ( 15, 20 դասաժամ ),**

**հայոց լեզու և գրականություն(10 դասաժամ)**

**ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (ձև 1),
-1լուսանկար 3x4չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թվականի փետրվարի 14-ից մինչև փետրվարի 27-ը ներառյալ ,ամեն օր՝ ժամը 09:00-

ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. մարտի 5-ին՝ ժամը 15:00-ին**, Արալեզի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Արալեզ, Հ. Թումանյան 10: Տեղեկությունների համար զանգահարել 093-53-16-32 հեռախոսահամարով: